


Վ. ՀՅՈՒԳՈ



ԿՈՋԵՏԱ



ՊԵՏՆՐԱՏ

1937

ՅԵՐԵՎԱՆ

38-Ս  
ՍԶԶԶԶ

ՎԻԿՏՈՐ ՀՅՈՒԳՈ

30 MAY 2011

84 Մ  
Հ-66

Կ Ո Ջ Ե Տ Ա

Ռուս. քաղվ.  
Տ. ԽՈՋՈՅԱՆ



ՀԼԿԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԳԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ  
ՅԵՐԵՎԱՆ 1937



12 JUN 2013

7850

POBUD

18  
21-11

12 0 2 0 0

~CA



56640-66



Փոքրիկ կողետան նստած էր իր սովորական տեղը՝ վառարանի մոտ. սեղանի տակ: Նա ցնցոտիների մեջ էր և բոքիկ վոտներին փայտե վոտ-նամաններ էր հագել:

Նա իր տիրոջ յերեխաների համար բրդե գուլպա յերգործում: Այդ յերեխաները հարեվան սենյակում ուրախ խաղում և ծիծաղում էին: Սենյակը լուսավորված էր փոքրիկ



լամպի թույլ լույսով: Սեղանների  
շուրջը նստած եյին պանդոկի հաճա-  
խորդները և խմում եյին: Ժամանակ  
առ ժամանակ նրանցից վորևե մեկը  
նայում եր պատուհանին և ասում:

— Խավար ե ինչպես փոսի մեջ:

Հարկավոր ե կատու լինել, վորպես-  
զի այսպիսի գիշերին առանց լապտե-  
րի կարողանաս ման գալ:

Կողետան մտածում եր, վոր գիշե-  
րը վրա յե հասել, տակառի մեջ ջուր  
չկա, իսկ ջրի համար հարկավոր ե գնալ  
հեռու անտառը:

Տիրուհի Տենարդեն, մի յերկար,  
հաստիկ կին, կարմիր, բարկացկոտ  
դեմքով, ընթրիք եր պատրաստում:  
Նա վերցրեց բաժակը, մոտեցրեց ջրի  
տակառին և պտտեց ծորակը: Կողե-  
տան բարձրացնելով գլուխը, ուշա-

դրությամբ հետևում եր նրա ամեն  
մի շարժումին:

Ծորակից բարակ ջուր թափվեց  
և բաժակը կիսով չափ լցրեց:

Եհ, ել ջուր չկա,—ասաց տիրու-  
հին:

Կողետան սարսափից մարեց: Հան-  
կարժ սենյակը ներս մտավ Տենար-  
դեյի պանդոկում իջեվանած առևտ-  
րականներից մեկը և բարկացած  
ասաց:

— Ձիս չեն ջրել:

Ձի կարող պատահել,—պատաս-  
խանեց Տենարդեն:

— Իսկ յես ձեզ ասում եմ, վոր  
վո՛չ:

— Յեթե ձին ջուր չի խմել,  
պետք է ջուր տալ,—ասաց Տենարդեն:

— Ուր ե աղջիկը: Նա կռացավ և  
տեսավ Կողետային, վորը խցկվել  
եր սեղանի ամենահեռու անկյունը:



— Դու՛րս յեկ, — գոչեց Տէ՛ն աւղեն  
Կողետան սեղանի տակից դուրս յե-  
կավ:

— Գնա ձին ջրի:

— Բայց, տիրուհի, եւ ջուր չկա, —  
վախվիսելով առարկեց Կողետան:

— Ուրեմն գնա և բեր: Գետա-  
կում ինչքան ջուր ուզես՝ կա:

Կողետան գլուխը ցած գցեց և  
վերցրեց ոջախի մոտ դրված դատարկ  
դուլը: Դուլըն այնքան մեծ եր,  
վոր աղջիկն ինքը կարող եր նրա մեջ  
տեղավորվել:

Տիրուհին սեղանի դարակի մեջ  
բան եր փնտրում:

— Ահա բեզ 15 սու: Վերադարձին  
կմանես հացի խանութը և հաց կգնես:

Կողետան լուսթյամբ դրամը վերց-  
րեց և գցեց զոգնոցի գրպանը:  
Ապա դուլը ձեռքին կանգնեց բաց





դռան մոտ: Թվում էր, թե նա սպասում էր, վոր վորեմե մեկն իրեն ոգնության կգնա:

— Վերջապես դու պետք է գնաս թե վոչ,— գոչեց տիրուհին:

Կոզետան դուրս յեկավ: Դուռը նրա յետևից ծածկվեց:

Կոզետան գնում էր գյուղի գլխավոր փողոցով: Այն տան կողքին, վորտեղ նա յեր ապրում, խաղալիքների խանութ կար: Նրա պատուհանում ամենաաչքի ընկնող տեղում՝ ապակե աչքերով, վարդագույն շորով, իսկական մագերի մեջ վոսկե ժապավեն անցկացված՝ մի հսկա տիկնիկ էր կանգնած:

Կոզետան չկարողացավ իրեն գրապել: Նա կանգնեց և սկսեց դիտել հրաշալի տիկնիկը, կամ ինչպես ինքն էր նրան կոչում՝ «տիկնոջը»:

Կոզետան դիտում էր նրա գեղեցիկ վարդագույն շորը, հրաշալի մագերը և մտածում, «ինչ բախտավոր տիկնիկ է»: Նա աչքերը պատուհանից հեռացնել չեր կարողանում:

Հանկարծ Կոզետան, հենց իր ափանջի տակ, լսեց տիրուհու կոպիտ ձայնը.

— Դու դեռ չե՞ս գնացել, անպիտան:

Կոզետան սկսեց վազել:

Մինչև աղբյուրը շատ հեռու չեր: Կոզետան ճանապարհը լավ դիտել, վորովհետև որական մի քանի անգամ անցնում էր: Նա գնում էր առանց կանգ առնելու: Սհա նա անցավ վերջին տունը, լույսերը չքացան և Կոզետան իրեն զգաց խավարի մեջ: Նա դույլը դրեց գետին և կանգնեց: Սկսեց սարսափել: Նա հուսահատու-

ընն նալում եր խավարին: Կուցե  
յետ դառնալ: Բայց, հիշելով Տենար-  
գեյին, նա սկսեց վազել:

Վերջապես Կոզետան հասավ գե-  
տակին: Մթության մեջ փնտռեց  
մատղաշ կաղնին, վորի յետևին սո-  
վորաբար կանգնում եր, ձեռքով  
ճյուղից բռնեց, կռացավ և դույլը  
ջուրն իջեցրեց: Նա չնկատեց, թե  
ինչպես դրամը նրա գրպանից սահեց  
և ջուրն ընկավ: Կոզետան դույլը  
ջրով լցրեց և դրավ գետին: Այստեղ  
նա զգաց, վոր շատ ե հոգնել: Նա  
նստեց խոտի վրա և աչքերը փակեց:  
Նրա գլխի վրա յերկինքն եր՝ ծխի  
քուլաների նման հսկայական սև  
ամպերով ծածկված: Փշում եր սառը  
քամին: Դիչ հանգստանալով, Կոզե-  
տան վոտի կանգնեց, յերկու ձեռ-  
քով բռնեց դույլի բռնակը, դժվա-

րությամբ բարձրացրեց ու յետ գնաց:  
Նա գնում եր դեպի առաջ թեքված,  
գլուխը ցած զցած, ինչպես պառավ:  
Ժամանակ առ ժամանակ նա կանգ  
եր առնում և յուրաքանչյուր անգամ  
սառը ջուրը ցուքուն եր տալիս և զո-  
ղողում նրա մերկ վոտները: Նա շատ  
դանդաղ եր գնում: Հասնելով հին  
շագանակենուն, նա վերջին անգամ  
կանգ առավ, վորպեսզի լավ հանգրս-  
տանա: Ապա ժողովեց իրբուր ու-  
ժերը և քաջաբար առաջ շարժվեց:

Հանկարծ նա զգաց, վոր դույլը  
թեթևացավ: Ինչ վոր մեկի հսկայա-  
կան ձեռք բռնել եր դույլը: Կոզետան  
գլուխը բարձրացրեց և տեսավ, վոր  
իր մոտ մի մարդ ե կանգնած:

Կոզետան չվախեցավ:

— Այս դույլը քեզ համար շատ ե  
մեծ, — ասաց մարդը:



— Այո՛, պարոն:

— Տո՛ւր ինձ, յես կտանեմ:

Կողետան դուլի բռնակը ձեռից  
բաց թողեց: Յե՛վ նրանք գնացին  
միասին:

— Քանի տարեկան ես:

— Ութ տարեկան, պարոն:

— Վերտեղից ես գալիս:

— Աղբյուրից:

— Դու դեռ հեռո՞ւ պետք ե գնաս:

— Այո՛, պարոն:

Անձանոթը լռեց, ապա հանկարծ  
հարցրեց.

— Մի՞թե՞ դու մայր չունես:

— Չգիտեմ, — պատասխանեց աղ-  
ջիկը, — և մինչև մարդը ուրիշ բան  
կհարցներ, ավելացրեց, կարծում եմ,  
վոչ:

Մարդը կանգ առավ, դուլը գետ-  
նին դրեց, կռացավ և յերկու ձեռքն





եւ դրեց աղջկա ուսերին, աշխատելով  
միմության մեջ զննել նրան:

— Անուշիկ ի՞նչ ե:

— Կոզետա:

— Այդքան ուշ ո՞վ ե քեզ ջրի  
ուղարկել:

— Տիրուհի Տենարդեն:

— Իսկ քո տիրուհի Տենարդեն  
ինչո՞վ ե զբաղվում:

— Նա իմ տիրուհին ե: Պանդո-  
կուհի:

— Պանդոկուհի՞, — կրկին հարց-  
րեց անծանոթը: — Ուրեմն յես այն-  
տեղ կգիշերեմ: Առաջնորդիր ինձ  
այնտեղ:

— Մենք այնտեղ եւ գնում ենք:

Անծանոթն արագ եր գնում: Կո-  
զետան հազիվ եր նրա յետևից հաս-  
նում: Բայց այլևս նա չեր վախենում

և բոլորովին հողնածուլթյուն չեր  
զգում:

Անցավ մի քիչ ժամանակ: Անծա-  
նոթը նորից խոսեց.

— Միթե՞ Տենարդեն ծառայող  
չունի:

— Վո՛չ, պարոն:

— Ուրեմն դու նրա մոտ մենավ  
ես աշխատում:

— Այո, պարոն: Նա յերկու փոք-  
րիկ աղջիկ ևս ունի:

— Ի՞նչ փոքրիկ աղջիկներ:

— Պոնինան և Զելման:

— Ովքե՞ր են այդ Պոնինան և  
Զելման:

— Որիորդներ են, տիրուհի Տե-  
նարդեյի աղջիկները:

— Իսկ նրանք՝ այդ որիորդներն  
ի՞նչ են անում:

— Ո՛ր, — բացականչեց Կոզետան,



նրանք գեղեցիկ, զարդարուն տիկ-  
նիկներ ունեն: Նրանք խաղում են:

— Ամբողջ ուր:

— Այո, պարոն:

— Իսկ դու:

— Յես աշխատում եմ:

Ամբողջ ուր:

Աղջիկն արցունքով լի աչքերով  
նայեց անծանոթին և կամացուկ  
ասաց:

— Այո, պարոն:

Յեվ քիչ լռելուց հետո ավելացրեց.

— Յերբեմն աշխատանքից հետո,  
յերբ ինձ թույլ են տալիս, յես խա-  
ղում եմ: Միայն թե յես քիչ խաղա-  
լիքներ ունեմ: Պոնինան և Ջելման  
թույլ չեն տալիս իրենց խաղալիք-  
ներով խաղալ: Իսկ յես մի փոքրիկ  
անագե սուր ունեմ:

Նրանք հասան գյուղին և անցան  
հացի խանութի մոտով:

կողետան բուրդովին մուացել էր,  
վոր տիրուհին հրամայել է հաց գը-  
նել:

— Մենք արդեն տուն ենք հաս-  
նում,— ասաց նա:

— Ի՞նչ է վոր:

— Այժմ թույլ տվեք ինձ դույլը  
վերցնել:

— Ինչո՞ւ:

— Վորովհետև, յեթե տիրուհի Տե-  
ե նարդեն տեսնի, վոր դույլը դուք  
եք բերել, ինձ կծեծի:

Անծանոթը դույլը տվեց նրան:  
Մի րոպեյից հետո նրանք կանգնած  
եյին պանդոկի դռան մոտ:

կողետան չկարողացավ զսպել իրեն  
և մի անգամ ել աչքը գցեց խաղա-  
լիքների խանութի լուսամուտին դը-  
րած տիկնիկին: Հետո նա դուռը ծե-  
ծեց: Դուռը բացվեց: Շեմքին հայտ-





նրվեց տիկին Տենարդեն, մոմը ձեռքին:

— Այ անպիտան, այդ դժուր յես:  
Այդքան կուշանան:

— Տիրուհի, այս պարոնն ուզում  
է գիշերել մեզ մոտ, — պատասխա-  
նեց Կոզետան:

Տիրուհու դեմքին խկույն սիրա-  
լիւր ժպիտ հայտնվեց:

— Ներս մտեք. — ասաց նա:

Անժանոթը ներս մտավ, սեղանի  
վրա դրավ ձեռքի կապոցն ու ձեռ-  
նափայտը և նստեց սեղանի մոտ: Իսկ  
Կոզետան նստեց իր սովորական տեղը՝  
սեղանի տակ, և սկսեց գուլպա գոր-  
ծել:

Անժանոթն ակնապիշ նայում էր  
Կոզետային: Աղջիկը նիհար էր և գու-  
նատ: Նա մոտ ութ տարեկան էր, բայց  
տեսքով վեց տարեկանից ավելի տալ  
չէր կարելի: Նրա ձեռքերը ցրտից



22240-22



ճաքճքել եյին, մերկ վոտները փայտե  
վոտնամանների մեջ նիհար եր ու  
կարմիր: Յնցոտիների միջից յերե-  
վում եր կապույտներով ծածկված  
մարմինը:

Հանկարծ տանտիկինը գոռաց.

— Իսկ ուր ե հացը:

Կոզետան սեղանի տակից դուրս  
յեկավ:

— Տիրուհի, հացի խանութը փակ եր:

— Հարկավոր եր դուռը ծեծել:

— Յես ծեծեցի, տիրուհի, բայց  
բաց չարին:

— Իսկ ուր ե փողը:

Կոզետան ձեռքը գրպանը տարավ.  
գրպանում փող չկար:

— Դու փողը կորցրել ես, — գո-  
ռաց տանտիրուհին և վերցրեց վա-  
ռարանի վրայից կախված մտրակը:

Կոզետան կծկվեց վառարանի ան-

կյունում. նա ուզում եր թագնվել  
տանտիրուհուց:

— Ներեցեք, տիկին, — ասաց ան-  
ծանոթը, — յես տեսա, վոր մի բան  
ընկավ այդ աղջկա գրպանից:

Նա կռացավ և ձևացրեց, իբրև  
թե ինչ վոր բան ե փնտռում:

— Դուք ե այս ե,

Նա մեկնեց Տենարդեյին քսա-  
նանոց սուռ:

— Վորպեսզի քեզ հետ նման բան  
այլևս չպատահի, դաժանորեն պա-  
տասխանեց նա:

Կոզետան նորից թագնվեց սեղանի  
տակ՝ «շան բնի» մեջ, ինչպես Տենար-  
դեն եր ասում:

Այդ պահին դուռը բացվեց: Ներս  
մտան Պոնինան և Զելման:

Դրանք յերկու լավ, մաքուր, գեր,  
պռոզ աղջիկներ եյին: Նրանք նստե-



ցին վառարանի մոտ: Աղջիկներն իրենց հետ տիկնիկներ եյին բերել և ուրախ խաղում եյին: Կողետան յերբեմնաչքը հեռացնում եր գուլպայից և նայում նրանց խաղին:

Աղջիկները տիկնիկը հին եր, գրգռված, բայց Կողետայի համար չափազանց գեղեցիկ եր: Չե՞ վոր նա իր կյանքում յերբեք տիկնիկ չեր ունեցել «իսկական» տիկնիկ:

Հանկարծ տանտիրուհին նկատեց, վոր Կողետան նայում ե աղջիկներին:

— Այդպե՞ս ես դու աշխատում, — գոռաց նա: — Յես քեզ մտրակով կստիպեմ աշխատել:

Անձանոթը նստած տեղից դիմեց տանտիրուհուն.

— Տիկին, թույլ տվեք, վոր նա խաղա:



Տանտիրուհին կոպիտ կերպով պատասխանեց.

— Աղջիկը պետք է աշխատի: Յես նրան ձրի չեմ կարող կերակրել:

— Ի՞նչ է անում նա:

— Յեթե ձեզ համար կարևոր է իմանալ, նա իմ աղջիկների համար գուլպա յե գործում:

Անծանոթը նայեց Կոզետայի ցրրտից կապտած վոտներին և շարունակեց.

— Յե՛րբ պետք է վերջացնի այդ գուլպան:

— Այդ ծուլը դեռ յ՛րեք-չորս ուր կաշխատի:

— Իսկ ի՞նչ կարժենա այդ գուլպան, յերբ պատրաստ լինի:

— Ամենաքիչը յերեսուն սու:

Չե՞ք վաճառի ինձ: Յես կրկնակի կվճարեմ:

Տանտերը լսելով այդ խոսակցությունը, կարևոր համարեց միջամտել.

— Իհարկե պարոն, յեթե դուք ցանկանում եք, մենք գուլպան ձեզ կարող ենք զիջել 5 ֆրանկով, — ասաց նա, — մենք մեր հյուրերին յերբեք չենք մերժում:

— Յես այդ գուլպան կգնեմ, — ասաց անծանոթը:

Յեվ գրպանից փող հանելով, դրեց սեղանի վրա:

Ապա նա դարձավ Կոզետային.

— Յես գնեցի այդ գուլպան, վոր դու գործում ես: Այժմ դու կարող ես խաղալ, աղջիկս:

Տանտերը վերցրեց դրամը և գրպանը դրեց: Կոզետան հագիվ շունչ քաշելով, համարձակվեց հարցնել.

— Տիրուհի, իրոք յես կարող եմ խաղալ:



— Սաղան, — բարկացած պատաս-  
խանեց տանտիրուհին:

— Տիրուհի, շնորհակալ եմ ձեզ-  
նից, — ասաց Կոզետան:

Մինչ տեղի յեր ունենում այդ  
խոսակցությունը, Պոնինան և Ջելման  
նոր խաղ սկսեցին: Նրանք բռնեցին  
կատվի ձագը, տիկնիկը գցեցին հա-  
տակի վրա և Պոնինան, վոր մեծն էր,  
սկսեց կատվի ձագը բարուրել: Նա  
ձագը փաթաթեց կարմիր և կապույտ  
փալասների մեջ և քրոջն ասաց.

— Այս տիկնիկը մյուսից ավելի  
հետաքրքրական է: Սա շարժվում է,  
աղմկում է, տաք է: Սա իմ փոքրիկ  
աղջիկը կլինի: Յես քեզ մոտ, հյուր  
կգամ: Դու նրան կնայես: Հանկարծ  
կնկատես նրա բեխերը և կզարմանաս:  
Հետո կտեսնես ականջները և կզար-

մանաս: Յեվ ինձ կասես. «Ա՛խ, աստ-  
ված իմ»: Իսկ յես քեզ կասեմ:  
«Այո՛, տիրուհի, այսպես է իմ փոք-  
րիկ աղջիկը: Այժմ բոլոր փոքրիկ աղ-  
ջիկներն այդպես են»:

Ջելման հրճվանքով լսում էր Պո-  
նինային: Կոզետան աշխատանքը մի-  
կողմ դրեց, բայց մնաց իր տեղը նստած:

Նա իր մոտ դրած արկղից հանեց  
ինչ վոր հին փալասներ և անագե-  
սուրը: Նա որորում էր և կամացուկ  
յերգում:

Հանկարծ Կոզետան դադարեց խա-  
ղալուց: Նա իրենից մի քանի քայլ  
հեռուն կատեց հատակին ընկած տան-  
տիրուհու աղջիկների տիկնիկը: Կո-  
զետան սուրը նետեց և կամացուկ  
հայացք գցեց չորս կողմը: Տանտի-  
րուհին խոսում էր. պանդոկապետի  
հետ և դրամ էր համրում: Պոնինան

և Զելման կատվի հետ խաղում է յին։  
Հյուրանոցի հաճախորդներն ուսում  
էին, գինի խմում, յերգում։ Վոչ վոք  
նրա վրա ուշադրություն չեր դարձ-  
նում։ Վոչ մի բոպե չպետք է կորց-  
նել։ Կոզետան դուրս յեկավ սեղանի  
տակից և շուրջը նայեց։

Համոզվելով, վոր իրեն վոչ վոք  
չի նայում, սողաց դեպի տիկնիկը  
և հափշտակեց։ Մի բոպեյից հետո նա  
նորից սեղանի տակն եր և անշարժ  
նստած եր այնպես, վոր տիկնիկը  
չերեվա։ Բացի անձանոթից վոչ վոք  
նրան չեր նայում։ Բայց Կոզետան,  
ինչքան ել աշխատեց թագցնել տիկ-  
նիկը, չնկատեց, վոր տիկնիկի մի վոտ-  
քը դուրս է ցցվել։

— Նայիր, Պոնինա, — ասաց Զել-  
ման։

Աղջիկները տեսան իրենց տիկ-

նիկը Կոզետայի ձեռքին։ Նրանք դար-  
մացան։ Կոզետան համարձակվել եր  
վերցնել նրանց տիկնիկը։

Պոնինան կամացուկ մոտեցավ մո-  
րը։

— Մամա, — ասաց նա, — և ձեռ-  
քով ցույց տվեց Կոզետային՝ նայիր։  
Կոզետան վոչինչ չտեսավ և չլսեց։  
Նա խաղում եր։ Տիրուհին յետ դար-  
ձավ և խուլոտ ձայնով գոռաց։

— Կոզետա։

Կոզետան ցնցվեց։

— Կոզետա, — կրկնեց նա։

Կոզետան կամացուկ իր նախկին  
տեղը դրեց տիկնիկը։ Հետո, չհեռաց-  
նելով հայացքը տիկնիկից, լաց յե-  
ղավ։

Անձանոթը տեղից բարձրացավ։

— Ի՞նչ ե պատահել, — հարցրեց նա։

— Միթե դուք չե՞ք տեսնում, —



ասաց տանտիրուհին, մատով ցույց տալով Կոզետայի վոտերի մոտ ընկած տիկնիկը: Այդ անպիտանը համարձակվել է վերցնել իմ յերեխաների տիկնիկը:

— Իսկ միթե՞ նա իրավունք չունի խաղալու:

— Նա իր կոպիտ, սարսափելի ձեռքերով կպել է տիկնիկին, — շարունակեց Տենարդեն:

Այդ խոսքերի վրա Կոզետան ավելի բարձր հեկեկաց:

— Վերջապես պիտի լռես դու, — գոռաց տանտիրուհին:

Անծանոթն ուղղվեց դեպի դուռը, բաց արավ և դուրս յեկավ փողոց:

Հենց վոր նա գնաց, տանտիրուհին վոտքով ամուր խփեց Կոզետային: Նա բարձրաձայն լաց յեղավ:

Անծանոթը շուտով վերադարձավ:

Նա ձեռքին բռնել էր մի հրաշալի տիկնիկ, գյուղի բոլոր յերեխաների հրճվանքի առարկան: Նա այդ տիկնիկը դրեց Կոզետայի առաջ:

— Առ այս տիկնիկը, — ասաց նա: Կոզետան աչքերը բարձրացրեց: Նա տեսավ, թե ինչպես մարդը տիկնիկը ձեռքին մոտեցավ իրեն: Նա լսեց, թե ինչպես նա ասաց. «Առ այս տիկնիկը»: Նա կամացուկ քաշվեց դեպի պատը և թագնվեց ամենահեռավոր անկյունում: Նա լաց չէր լինում և չէր աղմկում: Նա անգամ չէր համարձակվում շունչ քաշել:

— Դե, կոզետա, ինչո՞ւ չես վերցնում քո տիկնիկը, — ասաց տանտիրուհին այնպիսի ձայնով, վոր ուղում էր շոյող դարձնել:

Կոզետան համարձակվեց դուրս գալ թագստոցից: Նա վախով էր նայում

հրաշալի տիկնիկին: Նրա դեմքն ամբողջովին արտասուքով ծածկված էր: Բայց աչքերում արդեն ուրախություն էր շողում: Նա մոտեցավ տանտիկնոջը և վախվխելով շշնջաց.

— Տիրուհի, տիկնիկը կարո՞ղ եմ վերցնել:

— Իհարկե, քոնն է, — պատասխանեց տանտիրուհին: — Պարոնը քեզ է նվիրում:

— Իրոք պարոն, — շարունակեց կոզետան, դառնալով դեպի անձանոթը, — ճիշտ է վոր այս տիկինն իմս է:

Անձանոթի աչքերը լցվել էին արտասուքով: Նա գլխով արավ կոզետային և «տիկնոջ» ձեռքը դրեց նրա փոքրիկ ափի մեջ:

— Յես նրան կատարինեյեմ անվանում, — ասաց կոզետան: Տիրուհի՛, յես նրան կարո՞ղ եմ աթոռին դնել:

— Իհարկե, փոքրիկս, — պատասխանեց տանտիրուհին:

Կոզետան կատարինեյին դրեց աթոռի վրա, ապա նստեց նրա դեմ հատակին և լռությամբ նայեց նրան:

— Կոզետա, դե՛ խաղա, — ասաց անձանոթը:

— Յես խաղում եմ, — պատասխանեց կոզետան:

Տանտիրուհին շտապեց իր յերեխաներին քնելու ուղարկել, ապա անձանոթից թույլտվություն խնդրեց նաև կոզետային ուղարկելու:

— Նա այսոր շատ է հոգնած, — ասաց Տենարդեն:

Կոզետան գնաց քնելու, գրկած տանելով իր կատարինեյին:

Անցավ մի քանի ժամ: Անձանոթը դեռ նստած էր սեղանի մոտ: Վերջապես Տենարդե ամուսիններն ու-



դեկցեցին նրան իր համար պատրաս-  
տած սենյակը ու մենակ թողեցին:

Անժանոթը ձեռնափայտը և կա-  
պոցը դրեց անկյունում, հետո հանեց  
կոշիկները, վերցրեց մոմը և դուրս  
յեկավ: Նա անցավ միջանցքով և հա-  
սավ մինչեւ աստիճանները: Այնտեղ  
նա լսեց յերեխայի շնչառություն:  
Նա գնաց դեպի այդ շնչառությունը  
և զգաց իրեն աստիճանների տակ  
ինչ վոր փոսի մեջ: Այդտեղ, հին  
քթոցների արանքում, փոշու և սար-  
դի վոստայների մեջ անկողին եր  
(յեթե անկողին կարելի չէ անվանել  
հարդեբոլորովին պատառոտված ներ-  
քնակը և ծվեն-ծվեն յեղած վերմակը):  
Այդ անկողնում քնած եր Կոզետան:  
Նա քնած եր շորերը հագին: Ձմեռը  
նա չեր հանվում, վորպեսզի տաք լի-  
ներ: Նա իրեն եր սեղմել տիկնիկը և

խավարի մեջ փայլում եյին տիկնիկի  
մեծ և բաց աչքերը: Անժանոթը յեր-  
կար նայեց Կոզետային, ապա կամա-  
ցուկ վերադարձավ իր սենյակը:

Մյուս առավոտ լուսադեմից յեր-  
կու ժամ առաջ, պարոն Տենարդեն  
նստած եր պանդոկի ընդհանուր դահ-  
լիճում, սեղանի մոտ և անժանոթի  
համար հաշիվ եր պատրաստում: Տի-  
կին Տենարդեն կանգնել եր նրա մոտ  
և աչքերով հետևում եր, թե ինչ ե  
գրում:

«Հաշիվ առաջին համարի պարո-  
նին»:

Ընթրիք—յերեք Փրանկ

Սենյակ—տասը Փրանկ

Մոմ—հինգ Փրանկ

Կրակ—չորս Փրանկ

Սպասավոր—մեկ Փրանկ:

Ընդամենը քսաներեք Փրանկ:

— Քսաներեք ֆրանկ,— զարմացած բացականչեց տիկին Տենարդեն։  
Տենարդեն ծիծաղեց և ասաց.

— Կվճարի։

— Դու չե՞ս մոռացել, վոր այսոր յես դուրս կվճռեմ Կողետային։ Յես չեմ կարողանում տեսնել այդ աղջկան իր նոր տիկնիկի հետ։

Պարոն Տենարդեն ծխամորճ ծխեց։

— Դու հաշիվը կտաս այն մարդուն։

Ապա նա սենյակից դուրս յեկավ։ Հաղիվ եր նրա յետևից դուռը ծածկվել, յերբ ներս մտավ անծանոթը։

Պարոն Տենարդեն վերադարձավ և դռների մոտ կանգնեց այնպիսի դիրքով, վոր միայն տիրուհի Տենարդեն կարող եր տեսնել։

Անծանոթի ձեռքին կար կապոց և ձեռնափայտ։

— Այսպես վաղ դուք արդեն վե՞ր եք կացել, հարցրեց տիրուհին։— Մի՞թե, պարոն, դուք հեռանում եք մեզանից։

— Այո՛, տիկին, յես գնում եմ։

— Մի՞թե այստեղ դուք գործ չունեք։

— Վո՛չ, յես այստեղ միայն պատահաբար ընկա։

— Ինչքան ե պարտքս։

Տենարդեն, պատասխանի փոխարեն, մեկնեց նրան մի թերթ թուղթ։ Նա թուղթը բաց արավ և նայեց, սակայն նրա ուշադրությունն ինչ վոր այլ բանի վրա յեր։

— Լավ են արդյոք ձեր գործերը,— հարցրեց նա։

— Ո՛հ, պարոն, այժմ ժամանակ-



ներքը շատ ծանր են: Մեզ մոտ կարգին մարդիկ, վորոնք լավ են վճարում, սակավ են... այդ աղջիկն էլ մյուս կողմից:

— Ի՞նչ աղջիկ:

— Այ, այս փոքրիկ աղջիկը. դուք նրան տեսել եք՝ կողետան, կամ ինչպես մեզ մոտ գյուղումն են անվանում— Արտուտը: Հիմար անուն է: Աղջիկն ավելի շուտ՝ թռչող մկան է նման: Գիտե՞ք, պարոն, մենք վողորմություն չենք խնդրում, սակայն ինքներս ել չենք կարող տալ նրան: Մենք ոտար յերեխաններ կերակրելու միջոց չունենք:

— Իսկ յեթե ձեզ ազատեյին այդ աղջկանից, — հարցրեց անծանոթըն այնպիսի ձայնով, վորին նա աշխատում եր անտարբեր արտահայտություն տալ, սակայն վորի միջև

ակամայից հուզմունք եր լսվում:

Տիկնոջ կարմիր դեմքն ուրախությունից բացվեց և ավելի զգվելի դարձավ:

— Ո՛հ, պարոն, վերցրեք նրան, տարեք նրան և արեք ինչ կուզեք: Դուք իրոք նրան տանում եք:

— Այո:

— Հենց հիմա:

— Այո, հենց հիմա, բերեք նրան:

— Կողետա՛, — ձայնեց Տենարդեն:

— Իսկ յես այժմ կվճարե՞մ ձեզ համաձայն հաշվի: Ի՞նչքան է: Նա նայեց հաշվին: — Քսաներեք ֆրանկ է:

Նրա խոսքերի մեջ միաժամանակ և զարմանք, և հարց կար:

Անծանոթը սեղանին դրավ քսաներեք ֆրանկը և ասաց.

— Աղջկանը բերեք:

Այդ ժամանակ պարոն Տենարդեն  
անցավ սենյակի կենտրոնը և ասաց.

— Պարոն, դուք պարտք եք բո-  
լորը միասին քսանվեց սու: Քսան  
սու սենյակի համար և վեցը՝ ընթ-  
րիքի: Ինչ վերաբերում ե աղջկանը,  
ապա յես նրա մասին ձեզ հետ պետք  
ե խոսեմ: Կնիկ, մեզ մենակ թող:

Տիկին Տենարդեն դուրս յեկավ  
սենյակից: Հենց վոր նրանք մենակ  
մնացին, Տենարդեն ասաց.

— Պարոն, յես ձեզ պետք ե ա-  
սեմ, վոր այդ յերեխային յես պաշ-  
տում եմ.

Անծանոթը նայում եր նրան ան-  
թարթ.

— Վո՞ր յերեխային:

— Մեր Կողետային: Ձե՞ վոր դուք  
նրան մեզնից ուզում եք տանել: Հենց  
անմիջապես յես կասեմ՝ չեմ կարող

դրա հետ համաձայնվել: Յես նրա  
պակասը կզգամ: Հենց նորերս յես  
նրան բուժվելու համար վճարեցի  
400 ֆրանկից ավելի:

Վոչ հայր ունի և վոչ մայր: Յես  
նրան դաստիարակել եմ: Յես այդ  
աղջկան սիրում եմ: Իմ կինը դյու-  
րագրգիռ ե, բայց նա յել ե սիրում:

Անծանոթն առաջվա նման ակնա-  
պիշ նայում եր նրան:

— Ներեցեք, պարոն, չե՞ վոր վոչ  
վոր իր յերեխային չի տալիս առա-  
ջին հանդիպած մարդուն: Դուք հաս-  
կանում եք, վոր յեթե յես նրան բաց  
թողնեմ, ապա կուզեյի իմանալ, թե  
ո՞ւմ հետ ե նա գնում, վո՞րտեղ պետք  
ե լինի: Յես կցանկանայի յերբեմն  
այցելել նրան, վորպեսզի նա իմանա,  
թե հայրացուն պաշտպանում ե իրեն:  
Յես նույնիսկ ձեր անունը չգիտեմ:



Անծանոթը նայելով ուղիղ նրա աչքերին, պատասխանեց դաժան և վճռականապես.

— Դուք վոչ իմ անունս կիմանաք և վոչ ել այն, թե վո՞րտեղ եմ ապրում և թե ուր կլինի Կոզետան: Յես նրան տանում եմ և ցանկանում եմ, վորպեսզի նա ել յերբեք իր կյանքում չտեսնի ձեզ: Դուք այդ բանին համաձայն եք: Այո, կամ վոչ:

Լսելով անծանոթի վճռական և ուղղակի պատասխանը, Տենարդեն խոսակցության ձևը փոխեց:

— Պարոն,— ասաց նա,— ինձ հարկավոր է 1.500 ֆրանկ:

Անծանոթը գրպանից հանեց սև կաշվե դրամապարկը, դրամ հանեց և դրեց սեղանի վրա, ապա լայն ցուցամատը դնելով նրա վրա՝ ասաց.

— Կոզետային բերեք:

Մի րոպեից հետո Կոզետան յեկավ:

Անծանոթը բացեց իր Կապոցը. նրա մեջ կային յերեխայի մետաքսե հագուստ, գոգնոց, բաճկոնակ, բրդե գուլպաներ, վոտնամաններ, այն բոլորն, ինչ հարկավոր են յոթը տարեկան յերեխայի համար:

— Կոզետա, ասաց անծանոթը,— վերցրու այս բոլորը և շտապով հագիր:

Որն սկսվել էր արդեն, յերբ գյուղի արթնացած բնակիչները տեսան, թե ինչպես փողոցով անցավ մի աղքատ հագնված ծերունի, փոքրիկ աղջկա ձեռքից բռնած: Աղջիկը ձեռքին տանում էր վարդագույն շոր հագած տիկնիկը:

Դրանք անծանոթը և Կոզետան եյին:

Վոչ վոք չէր ճանաչում այդ մար-



դուն, շատերը Կողետային չճանա-  
չեցին: Կողետան գնաց: Ո՞ւմ հետ: Նա  
այդ չգիտեր: Ո՞ւր, նույնպես չգի-  
տեր: Նա միայն մի բան եր հաս-  
կանում, վոր ընդմիշտ թողնում է  
Տենարդեյի պանդոկը:



Տեղ. խմբագիր՝ Ան. Գասպարյան  
Սրբազրեջ՝ Թ. Հովակիմյան

Գլավիտի լիազր՝ Կ. 4695 Հրատ. 4228

Պատվեր 1062. Տիրաժ 4000.

Թուղթ 74×110. Տպագր. 1<sup>1</sup>/<sub>2</sub> մամ.

Մեկ մամ. 25,600 նիշ. Հեղինակային 1 մամ.

Հանձնված է արտադրության 17 ոգոստոսի 1937

Ստորագրված է տպագրության 25 նոյեմբերի 1937

Գլինը 60 կոպ.

Պետրատի տպարան, Յերևան, Լենինի փող. 65





ՀՀ Ազգային գրադարան



NL0390271



1850

9004

1  
2)

В. ГЮГО  
КОЗЕТА  
Гиз. Арм. ССР ЕРЕВАН